


# Մշակութային հաստատությունների պետականացումը Խորհրդային Հայաստանում (1920–1921 թթ.)

Սուքիասյան Համո Կ.

պ. գ. թ., դոցենտ, ավագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0009-3062-2285>

[hamosukiasyan@gmail.com](mailto:hamosukiasyan@gmail.com)

ՀՏԳ՝ 008:061.2(479.25); EDN: EUTPNG

DOI: 10.58587/18292437-2025.4-64

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** խորհրդային իշխանություններ, լուսավորության ժողովրդական կոմիսարիատ, բռնագրավում, տպարան, գրադարան, թատրոն, կինո, թանգարան:

## Национализация культурных учреждений в Советской Армении (1920–1921 гг.)

Сукиасян Амо К.

к.и.н., доцент, старший научный сотрудник, Институт истории НАН РА (Ереван, РА)

**Аннотация.** В период установления советской власти в Армении государственная политика была направлена на внедрение однопартийной системы управления во всех сферах общественной жизни – модели, ранее апробированной в Советской России. В этом контексте Революционный комитет Армении отказался от выполнения положений ереванского соглашения от 2 декабря 1920 года. С целью распространения коммунистической идеологии и осуществления идеолого-культурной пропаганды среди широких слоёв населения, власти Советской Армении инициировали мероприятия, направленные на установление политического контроля в республике. В рамках этой политики была проведена национализация основных культурно-просветительских учреждений – театров, кинотеатров, музеев, библиотек, книжных магазинов, а также типографий и даже музыкальных инструментов. Одновременно осуществлялась централизация издательской деятельности и разрабатывались меры по созданию единой системы политического просвещения. Координация и реализация этих процессов были возложены на Народный комиссариат просвещения, который сыграл ключевую роль в формировании новой культурной политики Советской Армении.

**Ключевые слова и словосочетания:** советские власти, народный комиссариат просвещения, конфискация, типография, библиотека, театр, кино, музей

## Nationalization of Cultural Institutions in Soviet Armenia (1920–1921)

Sukiasyan Hamo K.

PhD in History, associate professor, senior researcher,  
Institute of History of the NAS RA (Yerevan, RA)

**Abstract.** During the establishment of Soviet rule in Armenia, state policy was oriented toward the implementation of a one-party system of governance across all spheres of public life—an institutional model previously tested in Soviet Russia. Within this framework, the Armenian Revolutionary Committee renounced the implementation of the provisions of the Yerevan Agreement of December 2, 1920. In pursuit of disseminating communist ideology and promoting ideological and cultural propaganda among the broader segments of the population, the authorities of Soviet Armenia undertook a series of measures aimed at consolidating political control within the republic. As part of this agenda, major cultural and educational institutions—including theaters, cinemas, museums, libraries, bookstores, printing houses, and even musical instruments—were subjected to nationalization. Simultaneously, the publishing sector underwent centralization, and initiatives were developed to establish a unified system of political education. The coordination and execution of these processes were entrusted to the People's Commissariat of Enlightenment, which played a pivotal role in formulating and implementing the new cultural policy of Soviet Armenia.

**Keywords & phrases:** Soviet authorities, People's Commissariat of Enlightenment, confiscation, printing house, library, theater, cinema, museum

Ավելի քան երկուսուկես տարվա գոյությունից հետո 1920 թ. դեկտեմբերին արտաքին միջամտությամբ և կառավարության հրաժարման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց խորհրդային վարչակարգ: 1920 թ. նոյեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի զորամասերի ուղեկցությամբ ՀՀ

տարածք մտած Հայաստանի հեղկոմն այն խորհրդային հայտարարեց: ՀՀ դեկավարությունը որոշեց զերծ մնալ ռազմական բախումից. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրի համաձայն Հայաստանը հռչակվեց «անկախ Սոցիալիստական Հանրապետություն»: Մինչև հեղկոմի ժամա-

նումը Երևան՝ տեղում իշխանությունն անցավ ռազմական հրամանատարությանը՝ Դրոյի գլխավորությամբ: Վերջինին կից կոմիսար նշանակվեց Օտտո Միլինը [6, էջ 10-13]: Նույն սկզբունքով նախարարություններում ևս նշանակվեցին ժամանակավոր կոմիսար-վերահսկիչներ: Դեկտեմբերի 2-ին ՀՀ հանրային կրթության և արվեստի վերջին նախարար Վահան Մինախոբյանի հրաժարականից հետո՝ դեկտեմբերի 3-ից, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՄԽՀ) հանրային կրթության և արվեստի կոմիսարիատի կառավարչի պարտականությունները ստանձնեց նախարարի օգնական Պողոս Սոտնիկյանը [4, թ. 21 շրջ.]: Մինչև ՀՄԽՀ կառավարության ձևավորումը նախարարությանը «կից կոմիսար» նշանակվեց Վարվառա Քեչեկեզյանը (սպագա լուսժողովում Ա. Հովհաննիսյանի կինը) [2, գ. 680, թ. 72]:

Դեկտեմբերի 4-ին Երևան ժամանեց ՀՄԽՀ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմին հանդիսացող Հայաստանի հեղկոմը՝ ձեռնամուխ լինելով նախկին (դաշնակցական) կառավարության իշխանության կենտրոնական և տեղական մարմինների լուծարմանը կամ վերակառուցմանը: Դեկտեմբերի 12-ին լուսավորության ժողկոմ նշանակվեց Աշոտ Հովհաննիսյանը [2, գ. 8, թ. 3]:

Հայաստանի հեղկոմն առաջնափորձ պետականացրեց Երևանի տպարանները: Դրանցից ՀՅԴ «Ուրարտիա» տպարանում, ուր նախկինում հրատարակվում էր կուսակցության պաշտոնաթերթը «Հառաջ»-ը, դեկտեմբերի 5-ից սկսեց լույս տեսնել Հայկոմկուսի և Հայհեղկոմի պաշտոնաթերթը «Կոմունիստ»-ը [9, էջ 68]: Մայրաքաղաք Երևանում և գավառներում վերջինին հաջորդեցին բոլշևիկյան այլ պարբերականներ: Երևանում գտնվող բոլոր տպարաններն ու լիտոգրաֆիաները ենթարկվեցին Տպագրության և ագիտացիայի կոմիսարիատի պոլիգրաֆիայի բաժանմունքին [13, էջ 4]: Հիմնարկները և մասնավոր անհատները պարտավոր էին կոմիսարիատին հանձնել ունեցած թուղթը, մեծ ծրարները, նոր կամ գործածված լինելու մը: Հրամանը չկատարողներին սպառնում էր «հեղափոխական ժամանակների» խիստ օրենքները [5, էջեր 56-57]: Ավելին, աշխատանքի ժողկոմ Հ. Կոստանյանի հունվարի 24-ի հրամանով տպագրական գործի արտադրողականությունը բարձրացնելու հիմնավորմամբ «գորական կացության մեջ» հայտարարվեցին գրաշար բանվորները: Հրամանի կատարումից խուսափողներին սպառնում էր դատական պատասխանատվության ենթարկվելու հեռանկարը [5, էջ 94]: Լոռիում, Ալեքսանդրապոլում, Չանգեգուրում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո պետականացվեցին նաև այդ վայրերի տպարանները: Դրանք անցան գավառային հեղկոմների, այնուհետև՝

գավառային գործկոմների ենթակայությանը [12, N 30, էջ 3]: Ի տարբերություն ՀՀ-ի՝ ՀՄԽՀ-ում սկսեցին հրատարակվել միայն կոմունիստական ուղղվածության, կամ նրա շահերը սպասարկող պարբերականներ:

Այնուհետև Հայաստանի հեղկոմը նպատակային քայլեր ձեռնարկեց Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու նպատակով: Բոլշևիկների հակակրոնական գաղափարախոսության մեջ եկեղեցին ընկալվում էր միմիայն իբրև «հին կարգերի մնացուկ», «ժողովրդական զանգվածների գիտակցությունը թունավորելու միջոց» և խոչընդոտ՝ բնակչության «կոմունիստական դաստիարակության» համար: Հեղկոմի դեկտեմբերի 17-ի դեկրետով ՀՄԽՀ տարածքի բոլոր ազգությունների հոգևոր հիմնարկությունների մշակութային և կրթական հաստատությունները պետականացվեցին և հանձնվեցին լուսավորության ժողկոմատին [5, էջ 16]: Լուսժողովում Ա. Հովհաննիսյանի դեկտեմբերի 17-ի թիվ 3 հրամանի համաձայն՝ այդ հաստատությունները փոխանցվեցին տեղական հեղկոմների լուսավորության բաժիններին: Որպես բացառություն՝ Մայր Աթոռի նմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանը և տպարանն անմիջապես ենթարկվելու էին լուսժողկոմատին՝ վերակազմվելով վերջինի կողմից նշանակվող կոմիսարի ղեկավարությամբ [5, էջ 16; 2, գ. 959, թ. 4]: Լուսժողկոմի դեկտեմբերի 20-ի հրամանով Էջմիածնի վանական կրթամշակութային բոլոր նախկին հաստատությունների կոմիսար նշանակվեց երիտասարդ մտավորական Լևոն Լիսիցյանը, որին իրավունք տրվեց բռնագրավել համապետական նշանակություն ունեցող «բոլոր հնություններն ու գեղարվեստական գործերը»: Հայհեղկոմի 1921 թ. փետրվարի 5-ի դեկրետով Էջմիածնի պետականացված մշակութային ու կրթական հաստատությունների միավորմամբ ստեղծվեց Հայաստանի գիտական առաջին հիմնարկությունը՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը [5, էջեր 107-108]: Այն մինչ այդ շուրջ մեկ ամիս փաստացի գործում էր:

1920 թ. դեկտեմբերի 17-ին Ա. Հովհաննիսյանը մեկ այլ հրաման արձակեց «Կուլտուր-կրթական գործերի վերակազմության մասին»: Ըստ այդմ՝ լուծարվեցին քաղաքային և գավառային ինքնավարությունների կրթական բաժինները, նրանց լիազորություններն ու գույքն անցավ տեղական հեղկոմներին: Կրթամշակութային բոլոր մասնավոր հաստատությունները՝ դպրոցները, մանկապարտեզները, գրադարանները, ընթերցարանները, թատրոնները, կինեմատոգրաֆները, սկումբները, նաև դպրոցական, գրական-գիտական, հրատարակչական, թատերական, երաժշտական և այլ միություններն ու ձեռնարկությունները (տպարաններ, գրախա-

նութներ, կրպակներ) պետք է 3 օրվա ընթացքում հաշվառման ենթարկվեին տեղական հեղկոմների լուսավորության բաժանմունքներում: Անմիջապես լուծարվելու էին «ազգայնական, կղերական և, առհասարակ, հակահեղափոխական նպատակներ» հետապնդող մասնավոր հաստատությունները, իսկ նրանց գույքն անցնելու էր տեղական հեղկոմների լուսավորության բաժիններին [5, էջ 17]: Նշյալ հրամանի հիմքով Արարատյան հեղկոմի կողմից անմիջապես պետականացվեցին Երևանում գործող գրախանութները (Խ. Տեր-Մարտիրոսյանցի, Պ. Հովհաննիսյանի, «Արարատ», «Բեկոր») ունեցած ապրանքներով հանդերձ): Դրանք անցան լուսավորության ժողովմաստի տնօրինմանը: Այսպես՝ 1920 թ. դեկտեմբերի 28-ին Արարատյան հեղկոմին ուղղված գրությամբ լուսժողովմաստն առաջարկում էր Երևանում կնքված գրախանութների բանալիները հանձնել Գրիգոր Ղարազյոզյանին [2, գ. 369, թ. 2; 7, էջ. 30-31 շրջ.]:

ՀՄԽՀ իշխանություններն «աչքաթող չարեցին» նաև գրադարանները: 1921 թ. հունվարի 26-ին լուսժողովմ Ա. Հովհաննիսյանը հրաման արձակեց «Մասնավոր անձանց մոտ գտնվող գրադարանների ցուցակագրման, հաշվառման և բռնագրավման մասին», որի համաձայն տեղական հեղկոմների լուսավորության բաժինների կողմից ցուցակագրվելու էին հանրապետության տարածքում գտնվող բոլոր գրադարանները: Սահմանվում էր, որ հաշվառված գրադարանները «կարիք եղած դեպքում» կարող են բռնագրավվել տեղական հեղկոմների լուսբաժինների հատուկ թույլտվությամբ՝ միայն տեղական կրթամշակութային հաստատությունների կարիքների համար [5, էջեր 97-98]:

Բռնագրավումները տեղի էին ունենում ազգաբնակչության խուլ ու բացահայտ դժգոհության պայմաններում: Խորհրդային իշխանությունների դատաստանին չարժանանալու համար նրանց գերակշիռ մասը նախընտրում էր առժամանակ լռել՝ սպասելով հարմար պահի:

Խորհրդային Հայաստանում իրականացվող ռազմական կոմունիզմի քաղաքականությունը արվեստի ոլորտը չըջանցեց: 1920 թ. դեկտեմբերի 31-ին լուսժողովմը հրաման արձակեց երաժշտական գործիքների ցուցակագրման, հաշվառման և բռնագրավման մասին, որի համաձայն երաժշտական բոլոր գործիքները ցուցակագրվելու էին գավառական հեղկոմների լուսավորության բաժիններին կից ստեղծվող հանձնաժողովների կողմից: Դրանք կարող էին տեղական հեղկոմների լուսբաժինների կողմից բռնագրավվել «բացառապես հիմնարկությունների ու միությունների կարիքների համար»՝ բացառությամբ արհեստավարժ երաժիշտներին և երաժշտության ուսուցիչներին պատկանող գործիքների [5, էջ 45]: 1921 թ. հունվարի 3-ին գավառ-

կոմների լուսբաժիններին ուղղված հրահանգում լուսժողովմաստի արվեստի բաժինն առաջարկեց անմիջապես ցուցակագրել երաժշտական գործիքները: Գործիքի տիրոջը տրվող վկայականում նշվում էր, որ ցուցակագրված գործիքն առանց լուսբաժնի գիտության արգելվում էր ուրիշին տալ, վանառել կամ նվիրել [7, էջեր 495-496]: Թյուրիմացություններից խուսափելու նպատակով լուսժողովմի հունվարի 15-ի հատուկ հրամանում շեշտվում էր, որ Երևանի գավառում երաժշտական գործիքները բռնագրավվում և բաշխվում են միմիայն ժողովմաստի արվեստի բաժնի թույլտվությամբ [5, էջ 73]: Նշյալ իրավական հիմքով Եղիշե Չարենցի ղեկավարած Արվեստի բաժինը ձեռնամուխ եղավ երաժշտական գործիքների բռնագրավմանն ու վերաբաշխմանը [2, գ. 679, թ. 17, 35; 7, էջ 501]: ՀՄԽՀ լուսժողովմի կարգադրությամբ պետականացվեցին և 1921 թ. հունվարի 1-ից Երևանի գավառային հեղկոմի կրթամշակութային բաժնին (վարիչը Մուշեղ Աղայանն էր) հանձնվեցին նաև 1920 թ. Երևանում կոմպոզիտոր Սարգիս Բարխուդարյանի հիմնած խմբավարական դասընթացները և դերասան Վարդան Միրզոյանի հիմնած դրամատիկական ստուդիան [7, էջեր 494-495]:

Երաժշտական արվեստի նկատմամբ պետական հսկողություն սահմանելուն միտված այս քայլերը նպատակ ունեին նաև առկա սակավաթիվ երաժշտական գործիքներն օգտագործել մշակութային հաստատությունների և մասնագետ երաժիշտների կարիքները բավարարելու նպատակով: Պետք չէ գանց առնել նաև այն իրողությունը, որ ոչ պրոֆեսիոնալ, սիրողական երաժիշտները (այդ թվում՝ ազգային-ժողովրդական, հայրենասիրական երգեր կատարողները, աշուղները) սրանով օրենքից դուրս էին դրվում, նրանց գործիքները ենթակա էին պետականացման: Խորհրդային Հայաստանում չէր խրախուսվում, ավելին՝ մերժվում էր ազգային-հայրենասիրական, արևմտահայ ազգային-ազատագրական պայքարն ու Առաջին Հանրապետությունը հիշեցնող երաժշտական ստեղծագործությունները:

ՀՄԽՀ բնակչության շրջանում իրականացվող կրթամշակութային քարոզչական աշխատանքների շրջանակներում 1921 թ. հունվարի 14-ին Երևան քաղաքում հրավիրվեց Երևանի և Էջմիածնի գավառների մանկավարժների համագումար: Արվեստի դերի ու նշանակության մասին Լուսժողովմաստի արվեստի բաժնի վարիչ Եղիշե Չարենցի զեկուցումից հետո համագումարի ընդունված բանաձևում հստակ շեշտվում էր հանրապետության «բանվոր գյուղացիության լայն շրջաններում» արվեստը համատարած դարձնելու անհրաժեշտության մասին [2, գ. 680, թ. 80; 7, էջ 523]: Այս մղումով հունվարի 18-ին Ա. Հովհաննիսյանը գավառ-

լուսբաժիններին հանձնարարեց ցուցակագրել հանրապետության տարածքում գտնվող բոլոր թատերական պիտույքները (պարիկներ, գրիմի ներկեր, զգեստներ և այլն), որոնք կարող էին բռնագրավվել (քացառությամբ արհեստավարժ դերասաններին պատկանող իրերի) «պետական ժողովրդական թատերա-գեղարվեստական հիմնարկությունների անհրաժեշտ կարիքների համար»: Երևանում բռնագրավումները թույլատրելու էր լուսժողովմատի արվեստի բաժինը, գավառներում՝ գավիտեղկումների լուսբաժինները [5, էջեր 82-83; 2, գ. 959, թ. 26]:

Լուսավորության ժողովմատը ձեռնամուխ եղավ նաև թատերական խաղացանկի հատակեցմանը: 1921 թ. փետրվարի սկզբին ծրագրվում էր Արվեստի բաժնին կից թատերական խաղացանկ (ռեպերտուար) մշակող հանձնաժողով կազմակերպել՝ այդտեղ ընդգրկելով Կարմիր բանակի քաղաքական վարչության, Գեղարմի, Երևանի գավիտեղկումի և հանրապետության արհմիությունների խորհրդի լուսավորության բաժինների ներկայացուցիչներին [2, գ. 679, թ. 16; 7, էջեր 502-503]: Բաժինն այդ նպատակով գործնական քայլեր իրականացրեց, որոնք քաղաքական դրության պատճառով կիսատ մնացին: Ի դեպ, Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող առաջին շաբաթներին թատերական խմբերի խաղացանկը նկատելի փոփոխության չէր ենթարկվել: Այսպես՝ 1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվարին Գեղարվեստի աշխատողների միության դրամատիկական խմբի խաղացանկում ընդգրկված 31 դրամաների թվում էին Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտ», «Ուխտավաճառներ» ստեղծագործությունները [1, թ. 14 և շրջ.]: Սա այն դեպքում, երբ Ահարոնյանի բոլոր ստեղծագործությունները հետագայում գրաքննիչները ներառում էին արգելված ստեղծագործությունների ցանկերում:

Մշակույթային հաստատությունների բռնագրավման աշխատանքները, սակայն, ընդհատվեցին 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառով:

ՀՄԽՀ-ում գործադրված բռնանշումներն ու բռնագրավումները հանգեցրեց հակախորհրդային պոռթկման: Փետրվարի 18-ին դաշնակցական գործիչների ղեկավարությամբ ապստամբները գրավեցին Երևանն ու շրջակա տարածքները՝ կյանքի կոչելով Սիմոն Վրացյանի ղեկավարած ՀՀ վերջին կառավարությունը՝ լրացնելով շարժման ղեկավար մարմինը հանդիսացող Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) անդամներով: Վերակառուցվեց նաև պետական ապարատը [6, էջեր 55-56]:

Ժամանակավոր մարմին հանդիսացող ՀՓԿ-ն բոլշևիկյան բռնագրավումների հարցում զգուշավոր վերաբերմունք որդեգրեց: Դրա դրսևորումներից էր այն, որ, չնայած Ս.

Վրացյանի խոստմանը, ՀՄԽՀ իշխանությունների կողմից բռնագրավված եկեղեցապատկան հաստատությունները Մայր Աթոռին չվերադարձվեց [8, էջեր 114-115]: Ավելին, Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը շարունակեց գործել: Գրականագետ Նիկոլ Աղբալյանը նշանակվեց ինստիտուտում ՀՓԿ-ի ներկայացուցիչ՝ սկսված աշխատանքները կանոնավոր շարունակելու նպատակով [10, N 18, էջ 2]: Այդուհանդերձ, հաշվի առնելով հանրային պահանջը և ազգաբնակչության շրջանում եղած դժգոհությունը վերացնելու նպատակով, ՀՓԿ-ն նախկինում բռնագրավված իրերը ցուցակագրող հանձնաժողով կազմակերպեց: Բռնագրավված որոշ գրախանութներ ու ապրանքներ հանձնաժողովի որոշմամբ վերադարձվեցին նախկին տերերին [10, N 13, էջ 2; 2, գ. 39, թ. 30-31 շրջ.]: ՀՓԿ-ն թատերական և համերգային միջոցառումները վերահսկում էր ազիտացիայի վարչության (վերջինին էր տրամադրվել Երևանի երկու թատրոնների շենքերը) միջոցով փորձելով դրանք օգտագործել հակախորհրդային գաղափարաքարոզչական պայքարում [10, N 21, էջ 4]:

Սակայն Փրկության կոմիտեի իշխանությունը երկար չտևեց: 1921 թ. ապրիլի 2-ին խորհրդային մեծաքանակ զորքերը վերագրավեցին Երևանը: Այդուհետ Հայաստանի հեղկումն ու նրան փոխարինած ՀՄԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը բռնագրավումների հարցում առավել զգուշավորություն հանդես բերեցին: Ապրիլի 16-ին Երևանին գավառային հեղկումի բռնագրավումների բաժնին ուղղված գրությունում լուսժողովմատի արվեստի բաժնի վարիչ Ե. Չարենցը տեղեկացնում էր, որ առանց իր ղեկավարած բաժնի գիտության չի թույլատրվում երաժշտական գործիքներ և գեղարվեստական իրեր (նկարներ, քանդակներ) բռնագրավել: Մինչ այդ բռնագրավված իրերը տեղափոխվելու էին լուսժողովմատ [2, գ. 682, թ. 1]: Առաջնահերթ բռնագրավման ենթարկվեց հակախորհրդային ապստամբության առաջնորդների ունեցվածքը: Հայաստանի արտակարգ հանձնաժողովն ապստամբության ղեկավարներին պատկանող գույքերի թվում բռնագրավեց նաև ՀՀ վերջին վարչապետ և ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի գրադարանը: Ապրիլի 19-ին ՀՄԽՀ լուսժողովմատը հատուկ աշխատակից ուղարկեց Արտակարգ հանձնաժողով՝ Վրացյանի գրքերը ժողովմատ տեղափոխելու նպատակով [2, գ. 37, թ. 4]: Այդ գրքերը հետագայում հանձնվեցին Հանրային գրադարանին:

Արդեն 1921 թ. ապրիլի 23-ին ժողովմատներին ուղղված շրջաբերականում հեղկումի նախագահ Ս. Կասյանը հայտնում էր. «Հայհեղկումի սույն ապրիլի 11-ի նիստում որոշվել է կտրուկ կերպով արգելել բոլոր տեսակի բռնագրավումները և խուզարկությունները թագրած ապ-

րանքները գտնելու նպատակով: Դրա մասին պիտի հայտարարվի լրագրերում և առանձին թռուցիկներով, նույնպես հայտնել բոլոր պետական և հասարակական հիմնարկություններին» [3, թ. 62]: Ավելին, նոր տնտեսական քաղաքականության կենսագործմամբ պայմանավորված, բռնագրավված իրերի որոշ մասը վերադարձվեց նախկին տերերին: Մասնավոր անձանց պատկանող ունեցվածքի բռնագրավումները ոչ թե ընդհանրապես դադարեցվեց, այլ համատարած բռնագրավումները փոխարինվեցին առավել նպատակային պետականացումներով:

Ասվածի օրինակներից է կինոյի պարագան: 1922 թ. սեպտեմբերի 16-ից ՀՄԽՀ-ում տեսարանային բոլոր հաստատությունները (թատրոն, կինո, ակումբ և այլն) անցան լուսժողովմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության հսկողության տակ [11, էջ 3]: Սեպտեմբերի 29-ին էլ ՀՄԽՀ ժողովմատի որոշեց հանրապետությունում կինոյի գործը պետականացված համարել և հանձնել լուսավորության ժողովմատին: Այս որոշման հիման վրա Ժողովմատի 1923 թ. ապրիլի 16-ին որոշեց կինոյի գործը ղեկավարելու համար Լուսավորության ժողովմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության ենթակայությամբ «Պետկինո» կազմակերպելու մասին: Հանրապետությունում նոր կինոթատրոններ և կինոձեռնարկություններ կարող էին բացվել միայն վերջինի թույլտվությամբ [12, N 95, էջ 4]:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանում մշակութային հաստատությունների պետականացումն սկսվեց խորհրդայնացումից անմիջապես հետո (1920 թ. դեկտեմբերին): Այս գործընթացի ամփոփիչ հանգրվանը կինոթատ-

րոնների պետականացումն ու 1923 թ. ապրիլին «Պետկինո»-ի կազմակերպումն էր:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 37, ց. 1, գ. 47:
2. ՀԱԱ, ֆ. 122, ց. 1:
3. ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 96:
4. ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 355:
5. ՀՄԽՀ ղեկընտնների և հրամանների ժողովածու, պրակ I: – Էջմիածին, 1921. – 131 էջ:
6. **Ղազարեցյան Վ.**, Հայաստանը 1920–1940 թթ.: – Երևան, 2006. – 564 էջ:
7. **Զարեց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 6: – Երևան, 1967. – 803 էջ:
8. **Սուքիասեան Հ.**, Խորեն արք. Սուրադրեկեանի երկու զեկուցագրերը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե Սուրենեանցին: Էջեր 112-117: // «Էջմիածին» Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի: – Ս. Էջմիածին, 2010, Նոյեմբեր, հմ. ԺԱ: – 160 էջ:
9. **Վրացեան Ս.**, Յուշեր մօտիկ անցեալից: Էջեր 66-75: // «Հայրենիք» ամսագիր = Hairenik monthly / Օրգան Հ. Յ. Դաշնակցութեան. – Բոստոն : տպ. «Հայրենիք», 1923 դեկտեմբեր, թիւ 2. – 144 էջ:
10. «Ազատ Հայաստան», Օրգան ՀՀ կառավարության: – Երևան, 1921:
11. «Խորհրդային Հայաստան», Օրգան ՀԿ(Բ)Կ կենտրոնական, Երևանի կոմիտեների և ՀՄԽՀ կենտգործկոմի: – Երևան, 1922, N 223:
12. «Խորհրդային Հայաստան», 1923:
13. «Կոմունիստ», Օրգան ՀԿ(Բ)Կ կենտկոմի և ՀՄԽՀ հեղկոմի: – Երևան, 1920, N 22:

*Сдана/Հանձնվել է՝ 17.06.2025  
Рецензирована/Գրախոսվել է՝ 24.06.2025  
Принята/Ընդունվել է՝ 01.07.2025*